ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-19/157 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

Քաղ. Երևան «04» նոյեմբերի 2019թ.

2019թ-ի հոկտեմբերի 29-նոյեմբերի 4, ՀՀ, ք. Երևան, Արին-Բերդի 3-րդ նրբանցք, թիվ 3 հասցեում գտնվող «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի վարչական շենքում տեղի ունեցավ ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-19/157 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի հետևյալ անդամները՝

Ա. Գևորգյան	«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի տեխնիկական տնօրեն.
Ա. Ղոսալմյան	«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի էլեկտրական արտադրամասի պետ.
Ս. Ավագյան	«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի ՀՇԳՑ N1 էն. բլոկի էլեկտրական արտադրամասի պետի տեղակալ շահագործման գծով.
Ա. Վարդանյան	Մ և Գ բաժնի շուկայի ուսումնասիրության և հաշվառման գծով մասնագետ
Ա. Պետրոսյան	«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի Մ և Գ բաժնի առաջատար մասնագետ գնումների գծով.
Ա. Վարդապետյան	«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի իրավապայմանագրային բաժնի պետ.

Հանձնաժողովի նիստին ներկա էր հանձնաժողովի քարտուղար Տիրան Լաճիկյանը՝ «Լաճ Գրուպ» ՍՊԸ ներկայացուցիչ:

Հաշվի առնելով, որ հանձնաժողովի կազմը բաղկացած է վեց անդամից, իսկ հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Ա. Գևորգյանը, իսկ քարտուղարն էր՝ Տիրան Լաճիկյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-19/157 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու հայտեր ներկայացրած անձանց, վերջիններիս կողմից ներկայացված հայտերի գնահատման և առաջարկված գների մասին:

2. Ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին:

1. ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-19/157 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՅՏԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԱՆՁԱՆՑ, ՎԵՐՋԻՆՆԵՐԻՍ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի նախագահ Արկադի Գևորգյանը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնման հայտով սահմանված՝ տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների գները:

Հ/Հ	Գնման առարկայի անվանումը	Գնման հայտով սահմանված ընդհանուր գինը
1.	Հոսանքի շղթաների փորձարկման տերմինալ (CT Test Terminal)	40100
2.	Խողովակացուցիչ, ալյումինապատ (Heat Tracing)	800000
3.	Խողովակաշարերի տաքացուցիչ (Heat Tracing Cable) 5 մետր	360000

ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-19/157 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին՝ 2019 թվականի հոկտեմբերի 29-ին, ժամը «17:00»-ին:

Հրավերում փոփոխություններ չեն կատարվել, այլ հարցումներ և պատասխաններ չեն գրանցվել:

ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-19/157 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու հայտ է ներկայացրել հետևյալ անձը /այսուհետ՝ նաև մասնակիցը/.

Հ/Հ	Մասնակցի անվանում	Հասցեներ	Էլ. փոստ
1	ՊԻՊԱՍ ՖՈՒԴ ՍՊԸ	ք. Աբովյան, 3-րդ միկրոշրջան 12 շ. 27 բն.	armen8181@mail.ru

Հանձնաժողովն արձանագրեց, որ՝

- Մասնակիցը հայտը կազմել և ներկայացրել են ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-19/157 ծածկագրով գնման ընթացակարգի /այսուհետ՝ ընթացակարգ/ հրավերի /այսուհետ՝ հրավեր/ պահանջներին համապատասխան. ,
- Մասնակցի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը.,

• Մասնակցի կողմից ներկայացված հայտերում ներառված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված վավերապայմաններին.,

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտ ներկայացրած մասնակցի գնային առաջարկները՝ հիմք ընդունելով տառերով գրվածը.

Մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկների և զբաղեցրած տեղի վերաբերյալ տեղեկատվությունը ներառված է ստորև ներկայացված աղյուսակում (այսուհետ՝ Աղյուսակ):

(ՀՀ դրամ)

Չափաբաժնի համարը	Մասնակցի		Մասնակցի առաջարկած գները՝	
	Զբաղեցրած տեղ	Անվանում	Արժեք	Ընդհանուր գին
1	-	-	-	-
2*	-	ՊԻՊԱՍ ՖՈՒԴ ՍՊԸ	3200000	3840000
3	-	-	-	-

Որոշվեց՝

1. Արկադի Գևորգյանի կողմից ներկայացված տեղեկատվությունն ընդունել ի գիտություն.
2. Մասնակցի ներկայացված հայտը գնահատել բավարար:
3. Նիստը կասեցնել 2-րդ չափաբաժնի մասով: /բանակցություններ/
4. Տիրան Լաճիկյանին՝ հաշվի առնելով այն, որ բավարար գնահատված մասնակցի գնային առաջարկը գերազանցում է ԵՁԷԿ-ԳՀԱՊՁԲ-19/157 ծածկագրով գնման ընթացակարգի 2-րդ չափաբաժնով գնում կատարելու համար գնման հայտով սահմանված գինը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի. (ֆին. Միջոցները գերազանցող գներ/բանակցություններ)՝ ծանուցել ՊԻՊԱՍ ՖՈՒԴ ՍՊԸ-ին գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների մասին:

Կողմ՝ 6
Դեմ՝ 0

Հանձնաժողովն արձանագրեց, որ.

ՊԻՊԱՍ ՖՈՒԴ ՍՊԸ-ի գնային առաջարկը բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետի ավարտից հետո մնաց անփոփոխ:

2. ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-19/157 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Որոշվեց՝

1. Ընթացակարգը հայտարարել չկայացած, և հաստատել «ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-19/157 ծածկագրով ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին» հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:

Կողմ՝ 6
Դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝

Ա. Գևորգյան _____

Հանձնաժողովի անդամներ՝

Ա. Ղոսալմյան _____

Ս. Ավագյան _____

Ա. Վարդանյան _____

Ա. Պետրոսյան _____

Ա. Վարդապետյան _____

Հանձնաժողովի քարտուղար՝

Տ. Լաճիկյան _____